

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 3/3

քանը ապրիլի 2012 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ
ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԵԾ



Ա. Ն. ՄԻՄՈՆՅԱՆ



Ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմեր

N	Աշխատանքի ձևը	Ժամանակի նորմերը	Ծանոթություն
1.	Դասախոսություններ	1 ժամ հոսքին 1 ակադեմիական ժամի համար	Հոսքը՝ 60 հոգուց ոչ պակաս (մասնագիտացման խումբը 15 հոգուց ոչ պակաս)
2.	Գործնական պարապմունքներ	1 ժամ խմբին 1 ակադեմիական ժամի համար	Խումբը՝ 20-25 ուսանող, լեզվական խումբը 15-20 ուսանող (Արևել. ֆակ.-ի 1-ին կուրսում մասնագիտական լեզվի խումբը -10 հոգի), ժուռն. վարպետություն դասընթացի խումբը 10 ուսանող
3.	Լաբորատոր պարապմունքներ	1 ժամ խմբին 1 ակադեմիական ժամի համար	Խումբը 10-15 ուսանող (որոշ դեպքերում աշխ. անվտանգության պայմաններն ապահովելու համար, ռեկտորատի թույլտվությամբ՝ 6-8 ուսանող)
4.	Սեմինար պարապմունքներ	1 ժամ խմբին 1 ակադեմիական ժամի համար	Խումբը՝ 30 հոգուց ոչ պակաս
5.	Մագիստրատուրայում դասախոսությունների, գործնական, լաբորատոր և սեմինար պարապմունքների անցկացում	Բակալավրիատի համար նախատեսված հոսքերով և խմբերով, բայց ոչ պակաս քան 5 ուսանող բնագիտական խմբում, 10 ուսանող հումանիտար խմբում	
6.	Ստուգաքննների ընդունում	0,25 ժամ՝ 1 ուսանողին	
7.	Առանց եզրափակիչ գնահատման քնն. ընդունում	0.75 ժամ՝ 1 ուսանողին	
8.	Եզրափակիչ գնահատման քնն. ընդունում	1 ժամ՝ 1 ուսանողին	
9.	Ընթացիկ քննություններ չունեցող առարկաներից քննությունների ընդունում	0,5 ժամ՝ 1 ուսանողին	
10.	Կուրսային աշխատանքների ղեկավարում, (ուսումնառության ընթացքում 2 աշխատանք տարբեր կուրսերում)	Ուսումնառության ընթացքում 1 ուսանողին՝ 10 ժամ (1 աշխատանքին 5 ժամ):	1 դասախոս կարող է ղեկավարել ոչ ավել քան 10 աշխատանք
11.	Բակալավրիատի ավարտական աշխատանքների ղեկավարում	1 աշխատանքի ղեկավարին՝ 25 ժամ գրախոսության համար – 2 ժամ	1 դասախոսը կարող է ղեկավարել 5 աշխատանքից ոչ ավելի

12.	Մագիստրանտի ղեկավարում (ներառյալ մագիստրոսական թեզը)	ընդամենը 1 մագիստրանտի համար 50 ժամ, 2-րդ կիս. – 5 ժամ, 3-րդ կիս. – 10 ժամ, 4-րդ կիս. – 35 ժամ գրախոսության համար – 4 ժամ	1 դասախոսը կարող է ղեկավարել 6 մագիստրանտից ոչ ավելի (3-ական յուր. կուրսում)
13.	Մագիստրատուրայի ծրագրի գիտական սեմինարի ղեկավարում	1 ուստարում 40 ժամ	Պարտադիր է մագիստրատուրայի երկու կուրսերի ուսանողների մասնակցությունը
14.	Ավարտական աշխատանքների պաշտպանություն	Հանձնաժողովի նախագահին՝ 0,75 ժամ և յուրաքանչյուր անդամին՝ 0,25 ժամ 1 աշխատանքի համար	Հանձնաժողովի անդամների թիվը՝ 5-7 հոգի, ռեկտորի, պրոռեկտորների և դեկանների մասնակցությունը՝ առանց լրացուցիչ վարձատրության
15.	Մագիստրոսական թեզի պաշտպանություն	Հանձնաժողովի նախագահին՝ 1 ժամ և յուրաքանչյուր անդամին՝ 0,5 ժամ 1 աշխատանքի համար	
16.	Ամփոփիչ քննություն բակալավրիատում	Քննական հանձնաժողովի նախագահին 0,5 ժամ և յուրաքանչյուր անդամին՝ 0,25 ժամ 1 ուսանողի համար	
17.	Ասպիրանտների ղեկավարում	Տարվա ընթացքում՝ 70 ժամ առկա 50 ժամ հեռակա 1 ասպիրանտի համար	Պրոֆեսորը կարող է ղեկավարել տարբեր տարիների 3 ասպիրանտ, ղոցենտը՝ 2:
18.	Հայցորդների ղեկավարում	Տարվա ընթացքում՝ 20 ժամ 1 հայցորդի համար	
19.	Ուսումնական պրակտիկայի ղեկավարում, հաշվետվությունների ստուգում և ստուգարքի ընդունում	1 աշխատանքային օրում՝ 4 ժամ յուրաքանչյուր խմբին (դաշտային պրակտիկայի դեպքում՝ 6 ժամ)	Խումբը՝ 30 հոգի (դաշտային պրակտիկայի դեպքում՝ 15)
20.	Արտադրական պրակտիկայի ղեկավարում բակալավրիատում	1 աշխատանքային օրում՝ 2 ժամ յուրաքանչյուր խմբին կամ 3 ժամ՝ այլ կազմակերպություններում անցկացնելու դեպքում	Այլ կազմակերպությունում անցկացնելու դեպքում տեղի ղեկավարին 1 խմբի համար հատկացվում է 1 ժամ 1 աշխատանքային օրում
21.	Մանկավարժական պրակտիկայի ղեկավարում. ա) խմբի ղեկավարին բ) մանկավարժին գ) հոգեբանին	1 ժամ 1 ուսանողին 1 շաբաթվա համար 0,4 ժամ՝ 1 ուսանողին 1 շաբաթվա համար (1 ժամ՝ 1 խմբին 1 շաբաթվա համար ԵՊՀ-ում անցկացնելու դեպքում) 0,25 ժամ՝ 1 ուսանողին 1 շաբաթվա համար (1 ժամ՝ 1 խմբին 1 շաբաթվա համար ԵՊՀ-ում անցկացնելու դեպքում)	Խումբը՝ 8-10 ուսանող: Մանկավարժը կարող է միաժամանակ ղեկավարել մինչև 25 ուսանողի պրակտիկա, իսկ հոգեբանը՝ 50-ի
22.	Ուսումնական խորհրդատու (կուրստոր)	0.5 ժամ՝ բակալավրիատի 1 ուսանողին ուստարվա համար	

	Մասնակցություն ԵՊՀ մեթոդխորհրդի աշխատանքներին	60 ժամ՝ յուրաքանչյուր անդամին ուստարվա համար, ներառյալ ԵՊՀ և ֆակուլտետային մեթոդ. խորհուրդների նախագահներին	
24.	Մասնակցություն ֆակուլտետի մեթոդխորհրդի աշխատանքներին	35 ժամ՝ յուրաքանչյուր անդամին ուստարվա համար	Մեթոդխորհրդի կազմում կարող է ընդգրկվել յուրաքանչյուր ամբիոնից 1 հոգի
25.	Ֆակուլտետի դասախոսների որակավորման բարձրացման պատասխանատու	30 ժամ ուստարվա համար	
26.	Մագիստրոսական ծրագրի ղեկավար (ներառյալ մագիստրանտների պրակտիկաների ղեկավարումը)	40 ժամ ուստարվա համար	
27.	Դասալսումներ	Մեկ դասախոսի դասերը լսելու համար (բացառությամբ պրոֆեսորների) 1 ժամ ուստարվա կտրվածքով, բայց ոչ ավել, քան 20 ժամ ամբիոնին	Դասալսումները կատարում են ամբիոնի վարիչը և պրոֆեսորները
28.	Ամփոփիչ քննությունների խորհրդատվություն	Յուրաքանչյուր ավարտական քննությանը 12 ժամ	Հոսքը ոչ պակաս քան 60 ուսանող

1. Ամբիոնի հաստիքացուցակը կազմվում է՝ ելնելով մեկ դասախոսին միջին հաշվով 700 ժամից ոչ պակաս ծանրաբեռնվածությունից:

2. Դասախոսների միջև ամբիոնային ծանրաբեռնվածության բաշխումը կատարում է ամբիոնի վարիչը, որը հաստատվում է ղեկանի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից, ընդ որում՝

ա) պրոֆեսորի ծանրաբեռնվածության մեջ դասախոսությունները պետք է կազմեն ոչ պակաս քան 128 ժամ,

բ) դոցենտի ծանրաբեռնվածության մեջ լսարանային (դասախոսություն, գործնական, լաբորատոր, սեմինար) ժամերը պետք է կազմեն ոչ պակաս, քան 256 ժամ, իսկ դասախոսությունները՝ ոչ պակաս, քան 128 ժամ,

գ) պրոֆեսորների, դոցենտների, ասիստենտների, դասախոսների բեռնվածության մեջ ստուգարքներին և քննություններին հատկացված ժամաքանակը չպետք է գերազանցի 30%-ը,

դ) ամբիոնի գործնական, սեմինար կամ լաբորատոր դասաժամերի հաշվին ասպիրանտին (առկա) ուսումնառության ընթացքում պետք է հատկացվի 150 ժամ մանկավարժական պրակտիկայի համար (1-ին տարվա ասպիրանտին 30 ժամ, երկրորդ և երրորդ տարվա - 60-ական ժամ),

ե) ա և բ կետերի պահանջներին չբավարարող անձանց ծանրաբեռնվածությունը սահմանվում է 800 ժամ (համապատասխանաբար ավելացվում է ամբիոնի միջին ծանրաբեռնվածությունը):

3. Այլ հիմնարկներից համատեղությամբ դասավանդելու համար հրավիրված մասնագետներին կարելի է ձևակերպել մինչև 0.5 դրույքով կամ ժամավճարային հիմունքներով (ոչ ավել քան 240 ժամ ծանրաբեռնվածությամբ) միայն դասախոսություններ կարդալու, կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական քեզերի և ասպիրանտների ղեկավարման համար: